ԱԶԳ Գիտամանկավարժական

# 83-ամյա մանկավարժական համալսարանը կարեւորում է հայ-ռուսական կրթական հարաբերություններն ու ավանդույթները

Ռուսաց լեզվի, բանասիրության ուսումնասիրումն ու զարգացումը միշտ եղել են հայկական պետական մանկավարժական համալսարանի (ՀՊՄՀ) ուշադրության կենտրոնում: Եվ եթե ինչ-որ շրջանում հայ-ռուսական կրթական, գիտական եւ մշակութային հարաբերությունները ենթարկվել են փորձությունների, ապա վերջին շրջանում նշված կապերը կրկին ամրապնդվելու միտում են դրսեւորում: Հայաստանում Ռուսաստանի տարվա նշումը մանկավարժական համալսարանը նույնպես չշրջանցեց, որը հայ-ռուսական կրթական բարի եւ վաղեմի ավանդույթները վերականգնելու փորձերն սկսել է վաղուց: Համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր **Արտուշ Ղուկասյանի** հետ **«Ազգի»** հարցազրույցը բուհում ռուսաց լեզվի եւ կրթության զարգացման ներկա հիմքերի, ինչպես նաեւ համալսարանի պատմության եւ գործունեության մասին էր:



Հանրապետության դպրոցներում ռուսաց լեզվի, գրականության, բանասիրության ուսուցիչների պահանջը առիթ դարձավ, որ 2001-2002 թթ. ուսումնական տարում համալսարանում ստեղծվի ռուսական բանասիրության եւ ռոմանագերմանական լեզուների ֆակուլտետը: Ֆակուլտետի 4 ամբիոններում դասավանդում են ռուսերեն եւ օտար լեզուներ, ռուս եւ արտասահմանյան գրականություն: Տարեցտարի աճող, իսկ այժմ 480 ուսանող ունեցող ֆակուլտետում ռուսաց լեզվի մանկավարժներ եւ մասնագետներ են պատրաստվում ոչ միայն Երեւանի, այլեւ հանրապետության շրջանների եւ սփյուռքի դպրոցների համար: Թեպետ համալսարանը կարեւորում է նաեւ մյուս օտար լեզուների ուսուցումը, սակայն ռուսաց լեզվի հարցն այլ հիմքերի վրա է դրված: Համալսարանի ռեկտորի մեկնաբանմամբ, դա պայմանավորված է հայ-ռուսական վաղեմի ավանդույթներով, որոնք համալսարանը ոչ միայն պահպանել է այս տարիներին, այլեւ զարգացրել: «Հայ մտավորականության մեծ մասն իր կրթությունն ու որակավորումն ստացել է Ռուսաստանում: Այդ հարաբերությունները պետք է վերանայել, վերաձեւակերպել եւ զարգացնել այդ գիծը», հավելեց պրն Ղուկասյանը: Համալսարանը միջազգային համագործակցության պայմանագրեր ունի նաեւ այլ երկրների՝ Շվեդիայի, Հոլանդիայի, Իտալիայի, Իսպանիայի, Հալեպի նշանավոր համալսարանների հետ, «որոնց հետ բուհի կապը, ռեկտորի խոսքերով, նպատակ ունի նպաստելու հայագիտության զարգացմանը, սակայն Ռուսաստանի հետ հարաբերություններն այլ են»:

Հայաստանում Ռուսաստանի տարվա շրջանակներում իր նախաձեռնություններով աչքի է ընկել համալսարանի ռուսական բանասիրության ֆակուլտետը՝ մասնակցելով միջբուհական եւ հանրապետական մրցույթներին ու օլիմպիադաներին՝ զբաղեցնելով առաջավոր տեղեր:

Հայ-ռուսական կրթական հարաբերությունների ամրապնդմանն է ուղղված նաեւ համալսարանի նշված ֆակուլտետին Մոսկվայի քաղաքապետ Յուրի Լուժկովի նվիրած համակարգչային եւ լինգաֆոնային տեխնիկան, որով կահավորված սենյակների բացումը տեղի կունենա հոկտեմբերի 8-ին՝ Մոսկվայի քաղաքապետի մասնակցությամբ: Նույն օրը համալսարանը հյուրընկալելու է նաեւ Մոսկվայի քաղաքային մանկավարժական համալսարանի ներկայացուցչությանը: Ռեկտորի խոսքերով, իրենք քաղաքապետ Լուժկովի հետ ռուսական բանասիրության ֆակուլտետի 10-15 ուսանողների տարեկան կրթաթոշակ հատկացնելու որոշում ունեն: Պրոֆեսորը նշում է, որ հայ-ռուսական կապերի ամրապնդման շրջանակներում քիչ չեն եղել նաեւ փոխայցերը, տարատեսակ քննարկումները: Նախանշված հանդիպմանը նախատեսվում է Հայկական մանկավարժական համալսարանի եւ Մոսկվայի հիշյալ համալսարանի միջեւ պայմանագրի ստորագրում: Այն ենթադրում է ուսանողների, դասախոսների եւ գիտական գրականության փոխանակում, համատեղ հետազոտություն, դիպլոմների փոխադարձ ճանաչում, գիտական հանդիպումներ, մշակութային հավաքներ եւ այլն: Մի խոսքով, մանկավարժական համալսարանը ռեկտորի նախաձեռնությամբ անում է հնարավորը՝ բուհում ռուսական կրթության եւ ավանդույթների պահպանման ու խորացման համար:



Մանկավարժական համալսարանը, որ հիմնադրվել է 1922 թ.-ին եւ մեծ լուսավորիչ Խ. Աբովյանի անունը կրում է 1948 թ.-ից, երկար ճանապարհ է անցել՝ ձեւավորվելով, նորանոր բաժիններով եւ մասնագիտություններով համալրվելով: Ստեղծման շրջանում 5 ֆակուլտետ ունեցող համալսարանն այսօր ունի 11 ֆակուլտետ՝ 49 ամբիոններով, 37 մասնագիտություններով: Ժամանակին համահունչ բաժիններով համալրվելով՝ համալսարանը հավատարիմ է մնացել հանրապետության եւ սփյուռքի դպրոցների համար կադրեր պատրաստելու սկզբունքին: Եռաստիճան կրթական համակարգ ունեցող բուհի առկա եւ հեռակա համակարգում այսօր սովորում են 9 հազար 221 ուսանողներ, իսկ դասախոսական կազմը համալրում են անվանի ակադեմիկոսներ, գիտությունների դոկտորներ, պրոֆեսորներ, թեկնածուներ եւ դոցենտներ: Այսօր համալսարանն ունի Խաչատուր Աբովյանի անվան ոսկեզօծ հուշամեդալ, իր օրհներգը եւ զինանշանը: Ուշագրավ է համալսարանի դերը գիտական եւ գիտամանկավարժական կադրերի պատրաստման գործում, որն իրականացվում է ասպիրանտուրայի միջոցով: Ավելի քան հազար ասպիրանտներ պաշտպանել են դոկտորական եւ թեկնածուական ատենախոսություններ:

Համալսարանում գործում է «Սփյուռք» կենտրոնը, որն իրականացնում է սփյուռքահայ եւ հայրենի ուսուցիչների վերապատրաստում, ունի համակարգչային կենտրոն, լինգաֆոնային լսարաններ, գրադարանային հարուստ ֆոնդ, իսկ գիտական գրադարանում՝ նաեւ վիրտուալ ընթերցասրահ: Համալսարանի երեք ֆակուլտետներին համակարգիչներ է նվիրել Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը: Համալսարանն ունի հրատարակչություն, «Մանկավարժական համալսարան» պարբերաթերթը, ինչպես նաեւ հրատարակում է ուսանողական խորհրդի «Ապագա մանկավարժ» պարբերականն ու մի շարք ֆակուլտետների ամսաթերթերը:

ԳՈՀԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

# Մենք մոռանում ենք կենսառիթմերը

*Իսկ մեր ներսում դրված ժամացույցն աշխատում է*

Ամեն տարի գարնանն ու աշնանը մենք մեկ ժամով հետուառաջ ենք անում ժամանակը՝ անցնելով ամառային կամ ձմեռային ժամանակի: Այդ մասին անգամ օրենք ունենք: Այդպես են վարվում նաեւ աշխարհի շատ երկրներում: Սակայն Ճապոնիայում, ուր երբեք չեն փոխում ժամանակը, կյանքի միջին տեւողությունը աշխարհում ամենաերկարներից է. այսինքն՝ բնության հետ առավել ներդաշնակ ապրելու ճապոնական իմաստնությունը դրսեւորվել է նաեւ այս հարցում:

Ամառային երկար օրվանից շահ քաղելու գաղափարը եկավ քաղաքակրթության հետ՝ սկիզբ դրեցին էներգետիկներն անցած դարի քսանական թվականներին, զարգացած արդյունաբերական երկրներում, հատկապես ԱՄՆ-ում: Տնտեսական արդյունավետությունն ու էներգիայի խնայողությունը, ինչպես նաեւ հաղորդակցության եւ փոխադրման միջոցների համաժամանակյա գրաֆիկները չխախտելու հրամայականը շատ երկրների տարավ նույն պարտադրանքին: Հայաստանում տասնամյակից ավելի գարնանն ու աշնանը մարդիկ 10-15 օր հարմարվում են ժամանակի փոփոխության պատճառած անհարմարություններին եւ շուտով մոռանում դրանք: Բայց մեր մեջ գենետիկորեն դրված ժամացույցը շարունակում է աշխատել իր ռիթմով: Մեր գլխուղեղում կա մի գեղձ, որն արտադրում է մելատոնին նյութը. այդ նյութը արյանը տեղեկություն է տալիս լույսի ու մթության մասին՝ մարդուն մղելով հանգստի (քնի) կամ արթուն վիճակի, թելադրելով ապրել արեւի ու լուսնի փուլերով պայմանավորված եւ մեզ բնությամբ պարգեւված կյանքի ռիթմով: Փոխելով ժամանակը մարդը հենց այդ ռիթմն է խախտում՝ առանց մտածելու դրա հետեւանքների մասին: Դեմ գնալով մեր ներքին ժամացույցին՝ մենք կորցնում ենք բնության հետ ներդաշնակությունը, դեմ գնալով եւ տիեզերքում սահմանված պարբերականության կարգին: Այդպես ենք վարվում՝ աշխատելով գիշերը, ինքնաթիռով անցնելով մի ժամային գոտուց մյուսը, տարվա մի եղանակից մյուսը: Քաղաքակրթության բերած օգտաշահ սովորույթներին բնությունը պատասխանում է սթրեսներով, սրտանոթային համակարգի նոր հիվանդություններով, անքնությամբ, կյանքի միջին տեւողության նվազմամբ, որոնցից անտեղյակ էին մարդկության երիտասարդության շրջանում բնության հետ ներդաշնակ ապրող ժողովուրդները:

Մարդու բնական ռիթմերն ուսումնասիրող գիտությունը համեմատաբար նոր գիտություն է, սակայն հասցրել է արդեն հեղափոխական ազդեցություն ունենալ բժշկության վրա՝ փոխելով պատկերացումները մարդու առողջության պահպանման շատ ու շատ մեթոդների մասին: Այն հատկապես զգուշացնում է տարին երկու անգամ ժամանակը հետուառաջ տեղաշարժելուց՝ այդ առթիվ կատարված զանազան ուսումնասիրությունների ոչ հուսադրող պատկեր ներկայացնելով: Նախ՝ գարնանն ու աշնանը մարդը, եղանակային անցման սթրեսով պայմանավորված, ավելի շատ է հիվանդանում սեզոնային հիվանդություններով, իսկ երբ դրան գումարվում է ժամանակի փոփոխմամբ պայմանավորված անհարմարությունը, պատկերը կրկնակի նսեմանում է: Մի շարք երկրներում խնդիրն այժմ լրջորեն ուսումնասիրվում է. ըստ այդ ուսումնասիրությունների՝ ժամանակի փոփոխությունից հետո երկու շաբաթվա ընթացքում կտրուկ ավելանում են փողոցային եւ արտադրական պատահարները, սրվում են քրոնիկական հիվանդությունները, իսկ առողջ մարդիկ ավելի շատ են հիվանդանում մրսածությամբ եւ գրիպով: Բացի այդ՝ նրանք, հատկապես երեխաները, առավոտյան ժամերին ավելի ցրված եւ անարդյունավետ են աշխատում եւ սովորում: Չեխիայում, անսալով բուժաշխատողների խորհրդին, 2002 թվականի ժամանակը փոխելու օրը վարորդներին անընդհատ զգուշացնում էին երթեւեկելիս միացրած պահել լույսերը՝ այդպիսով նվազեցնելով պատահարները: Սակայն փորձն այնքան էլ չկրկնեցին՝ լրացուցիչ անհարմարությունները նկատի առնելով: Զարգացած երկրներում այժմ կան հասարակական կազմակերպություններ, որոնք փորձում են իրենց կառավարություններին ապացուցել, թե տնտեսական նպատակահարմարությունից ելնելով ժամանակի հետուառաջ անելն ավելի վնաս է պատճառում, քան օգուտ: Իսկ մենք ընդամենը ներկայացնենք քրոնոկենսաբանների առաջարկած մարդու կենսառիթմերի ազդեցության պատկերը մեր կենսակերպի վրա՝ մեր ներքին ժամացույցի հուշած ժամակարգը, որից ամեն մարդ կարող է քննախուզել իր ապրած օրը եւ հետեւությունների հանգել:




Արյան ճնշումն ամենից ցածր լինում է առավոտյան 4-5-ը, իսկ մեքենա վարողների տեսողությունն ամենից վատ է գիշերվա ժամը 2-ին:

Միայն առավոտյա 5-ին կամ 6-ին է մարդու օրգանիզմն աշխատունակ դառնում՝ լիցքավորող հորմոն կորտիզոնի առաջացմամբ պայմանավորված:

Սեռական հորմոններն առավելապես գոյանում են առավոտյա 8-ին մոտ՝ սա սիրո ժամն է:

Ցավը պակաս զգալի է առավոտյան ժամը 9-ին՝ այս ժամին կարելի է դիմել ատամնաբույժին, առհասարակ՝ ցավոտ գործողություններ անցնել:

Ուղեղն ավելի սթափ է ժամը 10-12-ը՝ սա ստեղծագործելու ժամն է:

Ամենից շատ ստամոքսահյութ արտադրվում է ժամը 13-ին՝ կուշտ կամ քաղցած լինելուց անկախ:

Մարզանքով կարելի է զբաղվել 13-ի եւ 14-ի միջակայքում եւ 16-18-ը, քանի որ մկաններն այդ ժամանակ ավելի լավ են աշխատում: Մարդն առավել շարժուն եւ ճարպիկ է դառնում ժամը 15-16-ը՝ այս ժամի ներգործությունն առավել հաճախ զգում են գորգագործները, դաշնակահարները, գրչի գործ ունեցողները՝ նկատելով իրենց մատների արագաշարժությունը:

Ծանր ուտեստներն ու խմիչքը օրգանիզմը (լյարդը) ավելի լավ է յուրացնում ժամ 18-ից 20-ը:

Այս թվարկումները կարելի է շարունակել՝ դեղերը լավ են յուրացվում երեկոյան, կա սխալների ու դանդաղկոտության ժամ (գիշերվա 3-5-ը), երեխաների մեծ մասն աշխարհ է գալիս ժամը 24-ից առավոտյան 4-ը. այս ժամակարգը չի հորինված, այլ թելադրվում է բնության կողմից, մարդու կենսառիթմերին համապատասխան, գենետիկորեն ձեւավորվելով հազարամյակների ընթացքում: Փոխելով ժամանակը՝ մենք չենք կարող փոխել մարդու կենսառիթմը, այլ ընդամենը դեմ ենք գնում բնությանը, որն անպայման դրա դիմաց որեւէ ձեւով պատժում է մեզ:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հ. Գ. *Շնորհակալություն թեման պարզաբանելու օգնած կենսաբաններին:*

